

**Կոտայքի մարզպետարանում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2014թ. հունիսի 29-ին կայացած նիստի**

Ս/թ հունիսի 29-ին կայացավ Կոտայքի մարզպետարանում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստը՝

**նախագահությամբ՝ Ա.Պետրոսյանի  
քարտուղարությամբ՝ Ա.Գաբրիելյանի**

**Մասնակցությամբ՝**

- Ա.Ղազարյան** – ՀՀ կոտայքի մարզպետի տեղակալ՝ խորհրդակցական ճայնի իրավունքով
- Ա.Պետրոսյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ
- Ա.Գաբրիելյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի քարտուղար, Հրազդանի քաղաքապետի օգնական
- Ա.Աղոյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի ղեկավար
- Զ.Բուրուշյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
- Մ.Պետրոսյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Մելքոնյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, <<Հայ օգնության միություն >> հասարակական կազմակերպության անդամ
- Զ.Ուլանյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, կանանց հանրապետական խորհրդի Հրազդանի մասնաճյուղի նախագահ
- Կ. Հարությունյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ
- Ք.Բաղդասարյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, ՀՀԿ կուսակցության Աբովյանի շրջանային կազմակերպության կանանց խորհրդի նախագահ

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամներից 9-ը, բացակայում էին 2-ը:

Հրավիրյալի կարգավիճակով նիստին մասնակցում էին ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետներ՝

Ն. Խչոյանը, Հ. Հալաբյանը, Ծ. Արտաշյան, Հ.Սաֆարյան, Լ.Մերգոյան:

**Օրակարգ**

**1. Հայաստանի Հանրապետության գեդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ.ազգային ծրագրերով նախատեսված 2014թ –ի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում իրականացված միջոցառումների մասին**

*գեկուցող՝ գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Ա.Պետրոսյան /*